


ՏԵՂԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ



ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ (PACA)

ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔՈՒՄ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԿԱՐՄԻՐԳՅՈՒՂ
ԵՎ ԳԱՆՁԱԿ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ, 2014

Այս վերլուծությունն իրականացվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության /ԱՄՆՄԶԳ/ միջոցով: Հետազոտության բովանդակությունը միմիայն հեղինակներինն է և պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄԶԳ տեսակետները:



| | |
|---|----|
| Վերլուծությունն իրականացնող կառույց | 3 |
| Համայնքներ | 4 |
| Համայնքների մրցակցային առավելությունները | 7 |
| Տնտեսության ճյուղերի վերլուծություն | 8 |
| Անասնապահություն և հետագա վերամշակում | 10 |
| Անասնապահություն | 10 |
| Կաթի և կաթնամթերքի արտադրություն | 12 |
| Մսի և մսամթերքի արտադրություն | 14 |
| Նախաձեռնություններ անասնապահության և անասնամթերքի վերամշակման ոլորտներում | 18 |
| Հողագործություն | 19 |
| Հացահատիկի մշակում | 20 |
| Կարտոֆիլի մշակում | 21 |
| Բազմամյա մշակաբույսեր | 22 |
| Այլ մրցունակ մշակաբույսերի աճեցում | 23 |
| Նախաձեռնություններ հողագործության ոլորտում | 23 |
| Կրթություն և ինֆորմացիոն տեխնոլոգիաներ | 24 |
| Առևտուր | 25 |
| Կանանց ներգրավվածությունը արժեշղթաներում | 25 |

Վերլուծությունն իրականացնող կառույց

Գեղարքունիքի մարզի առևտրաարդյունաբերական պալատ



ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԱՌԵՎՏՐԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏ
GEGHARKUNIK CHAMBER OF COMMERCE AND INDUSTRY

Գավառ քաղաքում ու հարակից Կարմիրգյուղ և Գանձակ համայնքներում տեղական տնտեսական զարգացման գործընթացն սկսվեց 2014 թ-ի մայիս ամսին ԱՄՆ ՄԶԳ-ի ֆինանսավորմամբ համատեղ իրականացվող «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (PRP) ծրագրի շրջանակում: Բացահայտվեցին համայնքների հիմնական մրցակցային առավելությունները և ախտորոշվեցին տնտեսության առաջատար ճյուղերը, որոնց հիման վրա առաջարկվեցին տնտեսության զարգացման համար արմատական նշանակություն ունեցող նախաձեռնություններ:

Գործընթացն իր մեջ ներառեց հետևյալ փուլերը.

- ⇒ գործընթացի ընդհանուր ներկայացում, ծանոթություն, տեղական թիմի ձևավորում,
- ⇒ համայնքների տնտեսական քարտեզագրում- առաջատար ճյուղերի առանձնացում, ճյուղերում առաջատար դերակատարների բացահայտում,
- ⇒ առկա արժեշրթանների վերլուծություն, բարեփոխման նախաձեռնությունների բացահայտում,
- ⇒ աշխատանքային հանդիպումներ՝ առաջատար ճյուղերի վերլուծության համար,
- ⇒ արդյունքների ամփոփում, նախաձեռնությունների ստացում,
- ⇒ նախաձեռնությունների վերջնականացում, գրքույկի մշակում,
- ⇒ համայնքների ակտիվ դերակատարներին ստացված արդյունքների, նախաձեռնությունների ներկայացում:

Համայնքներ

Գավառի ենթաշրջանը գտնվում է Գեղամա լեռնաշղթայի արևելյան լանջին: Ենթաշրջանի կենտրոնը Գավառ քաղաքն է (Գավառ քաղաքը նաև Գեղարքունիքի մարզի մարզկենտրոնն է), որը տեղակայված է Գավառագետի ստորին հոսանքի ավազանում՝ մայրաքաղաքից 98 կմ հեռավորության վրա:

Գանձակ և Կարմիրգյուղ համայնքները սահմանակից են Գավառ քաղաքին և ունեն ինչպես տնտեսական, այնպես էլ սոցիալական և մշակութային փոխկապակցվածություն, համագործակցության և բարեկամական սերտաճած կապեր:

Այս բնակավայրերը Հայաստանի հնագույն բնակավայրերից են, որտեղ պահպանված են նախ-ուրարտական բերդի ավերակներ, բազմաթիվ միջնադարյան խաչքարեր և մատուռներ:

1830-ականներին այստեղ են վերաբնակվել Հին Բայազետից եկած գաղթականները, ովքեր, ի հիշատակ իրենց նախկին բնակավայրի, Գավառը կոչել են Նոր Բայազետ:

19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբին Գավառի ենթաշրջանը եղել է աշխույժ առևտրի կենտրոն: Այստեղ պարբերաբար կազմակերպվել են կիրակնօրյա շուկաներ, որտեղ վաճառվել են խոշոր և մանր եղջերավոր անասուններ, գյուղատնտեսական մթերքներ, ինչպես նաև իշխան ձուկ, որի որսի մենաշնորհը պատկանել է «բայազետցիներին»:

Սովետական տարիներին ենթաշրջանը ունեցել է զարգացած գյուղատնտեսական ոլորտ՝ շնորհիվ անասնապահության զարգացմանը նպաստող բնակլիմայական պայմանների՝ լեռնատափաստանային բերրի սևահողերի և լեռնամարգագետնային մեծաքանակ տարածքների:

Զարգացած գյուղատնտեսությանը զուգահեռ՝ Գավառ քաղաքում զարգացած է եղել արդյունաբերությունը: Այստեղ գործել են 11 արտադրական գործարաններ և ֆաբրիկաներ՝ թեթև արդյունաբերության, ճշգրիտ և ռադիո սարքավորումների, մեքենասարքավորումների և այլ ոլորտներում, որոնց արտադրանքը սպառվել է ամբողջ ԽՍՀՄ տարածքում (*քաղաքում գործել են յուղ-պանրի, ավտոնորոգման, կաբելի,*

սարքաշինական, «Սևան» հանքային ջրերի, փայտամշակման գործարանները, տրիկոտաժի, կարի, կոշիկի ֆաբրիկաները, մսի կոմբինատը, «Դիպոլ» արտադրական միավորումը): Գավառ քաղաքի աշխատունակ բնակչության 95 % - ը աշխատել է այս ոլորտներում:

ՀՀ անկախացումից հետո արդյունաբերությունը հայտնվեց կաթվածային վիճակում: Գործարանները ամբողջությամբ փակվեցին՝ արտադրանքի իրացման, հումքի ներկրման, արտահանման դժվարությունների հետ կապված խնդիրների հետևանքով: Գործարանների մի մասը մինչ այժմ պահպանված են, որոնք սակայն չեն գործարկվում, իսկ հիմնական մասը սեփականաշնորհվելուց հետո մասնատվեց և վաճառվեց, և նրանց տեղում այժմ ավերակներ են :

Արտադրական խոշոր ձեռնարկությունների գործունեության դադարեցումը ստիպեց տեղի բնակչությանը ինտենսիվ ներգրավվել տնտեսության այլ ոլորտներում՝ առևտուր, փոքր արտադրամասեր և գյուղատնտեսություն, ինչպես նաև արտագնա աշխատանքով, որը մինչ այժմ տնային տնտեսությունների մեծ մասի համար հիմնական եկամուտների մի մասն է:

Տարածաշրջանում այժմ բազմաճյուղ և ինտենսիվ զարգանում է գյուղատնտեսությունը: Գյուղատնտեսական վարելահողերում մեծ բաժին ունեն ցորենի, գարու և կարտոֆիլի հողատարածքները:

Գյուղատնտեսական ճյուղերից են՝ դաշտավարությունը, բանջարաբուծությունն ու, քիչ քանակությամբ, պտղաբուծությունն ու այգեգործությունը:

Զարգացած և մրցունակ ճյուղ է խոշոր եղջերավոր անասնապահությունը (հատկապես՝ մսատու անասնապահության ուղղությունը): Տարածաշրջանը այժմ հանդիսանում է որակյալ մսի արտահանող ՀՀ հարակից մարզեր և Երևան: Այստեղ ձևավորվել են որակյալ մսի և մսամթերքի «ոչ պաշտոնական ստանդարտներ», մսի որակի հանդեպ խիստ պահանջարկ:

Արտադրվող կաթը հիմնականում մթերվում է խոշոր կաթնամթերք արտադրող ձեռնարկությունների կողմից: Համայնքներում գործում են պանրի և յուղի արտադրության մի քանի փոքր արտադրամասեր:

Գավառ քաղաքում զարգացած է նաև կրթական ոլորտը, որն ապահովում է ներքին աշխատաշուկայում կադրերի առկայությունը: Տարածաշրջանն ունի մեկ տասնյակից ավելի հանրակրթական դպրոցներ, երաժշտական և արվեստի դպրոցներ, մշակույթի տներ, երկրագիտական թանգարան, համալսարան, քոլեջներ, մարզադպրոց, մանկապարտեզներ, բժշկական կենտրոն և պոլիկլինիկա:

Գավառի տարածաշրջանում մարդիկ հայտնի են եղել իրենց հյուրասիրությամբ և ավանդական յուրահատուկ համեղ ուտեստներով: Աշխատանքի հետ կապված բարդությունները և կենսամակարդակի անկումը չի խանգարել այդ ավանդույթների զարգացմանն ու պահպանմանը: Այսօր էլ ցանկացած ընտանիք պատրաստ է հյուրընկալել և հյուրասիրել հյուրին ավանդական «Քյավառի փախլավան», «Քյավառի քյուֆթան», «Ռշտան» և այլն:



Համայնքների ժողովրդագրական ցուցանիշներ

| | Գավառ | Գանձակ | Կարմիրգյուղ |
|-------------------------------|-------|--------|-------------|
| Բնակչություն | 26508 | 4378 | 6383 |
| որից՝ առկա | 23390 | 4247 | 5542 |
| Տնային տնտեսություններ | 6985 | 1587 | 2190 |
| որից՝ նպաստառու | 2053 | 164 | 303 |
| որից՝ նպաստառու % - ով | 29 % | 10 % | 14 % |

Համայնքների մրցակցային առավելությունները

Ստորև ներկայացված են համայնքների տնտեսությունների մրցակցային առավելությունները, որոնց հիմքում է ընկած համայնքների տնտեսության ուժը՝ համեմատած ինչպես հարևան, այնպես էլ ՀՀ այլ մարզերի համայնքների հետ:

Բնական ռեսուրսներ՝

- Արևային օրերի մեծ քանակ (արևային ժամերի միջին թիվը տարածքում տարեկան ավելի քան 2800 ժամ/ տարի է):
- Լեռնատափաստանային բերրի սևահողեր և բարձրադիր մասերում լեռնամարգագետնային հողեր, որոնք անհրաժեշտ և նպաստավոր պայման են դաշտավարության և անասնապահության զարգացման համար:
- Հանքային աղբյուրները և առկա ջրային ռեսուրսները՝ Գավառագետը և բնական աղբյուրները, ոռոգելի հողատարածքների առկայությունը:
- Դեղաբույսեր՝ մասրենի, չիչխան, անթառամ կղմինդրաբաժակ, առյուծագի և նման այլ 200 և ավելի տեսակներ:

Մասնագիտական, մարդածին առավելություններ՝

- Գավառի պետական համալսարանը, որը պատրաստում է կադրեր բնագիտական, հումանիտար, տնտեսագիտական և բանասիրական ուղղություններով,
- մաթեմատիկական բարձր ունակություններով աչքի ընկնող երիտասարդություն,
- բարձրորակ մասնագետներ՝ գորգագործներ, խառատներ, եռակցողներ և այլն,
- հաջողված գործարարներ արտասահմանում՝ շինարարության, ճարտարապետության, բժշկության և առևտրի ոլորտներում,
- պատմամշակութային վայրեր և հուշարձաններ,
- համեմատած մարզի այլ համայնքների հետ՝ գյուղտեխնիկայի մեծ քանակության առկայություն,
- տարածքի բրենդ հանդիսացող ուտելիքներ՝ «Քյավառի փախլավան», «Քյավառի քլուֆթան», «Ռշտան» և այլն,
- մսի զարգացած արտադրություն, կապեր շուկաներում և որակի հանդեպ խստապահանջ պահանջարկ:



Տնտեսության ճյուղերի վերլուծություն

Համայնքների տնտեսության հիմնական ճյուղերը վերլուծելիս հաշվի է առնվել, թե որտեղ է կենտրոնացած աշխատող բնակչության մեծ մասը և որտեղ է ստեղծվում ամենամեծ եկամուտը: Գնահատվել են այս ճյուղերի զարգացման վրա ազդեցություն ունեցող գործոնները, արժեքային շղթաները, օժանդակող ճյուղերի հասանելիությունը, անհրաժեշտ ենթակառուցվածքների հասանելիությունն ու ճյուղում առկա պահանջարկի որակը: Ուշադրություն է դարձվել ճյուղերի շահութաբերության վրա՝ համեմատած այլ ճյուղերի և համայնքների (որոշ դեպքերում՝ տարածաշրջանների և հանրապետության միջին) ցուցանիշների հետ:

Փորձագետները և տեղական թիմը համատեղ առանձնացրել են համայնքների տնտեսական զարգացման գերակա ճյուղերը, որոնք հիմնված են տեղական մրցակցային առավելությունների վրա և մրցունակ են՝ ՀՀ այլ տարածաշրջանների նույն ոլորտների հետ համեմատած:

Ռազմավարական ճյուղեր

⇒ Անասնապահություն, մսամթերքի և կաթնամթերքի վերամշակում

Անասնապահության զարգացման համար բարենպաստ պայմանների առկայությունը հնարավորություն է ստեղծել վերջին երկու տասնամյակների ընթացքում անասնապահության զարգացման համար:

Չնայած անասնապահության դինամիկ զարգացմանը՝ համայնքներում զարգացած չէ կաթի և մսի հետագա մշակումը (*մանրամասն տե՛ս «Անասնապահություն և հետագա վերամշակում» բաժինը*): Կաթի ավելի քան 70 %-ը մթերվում է համայնքներից դուրս գործող խոշոր կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող ձեռնարկությունների կողմից:

Արտադրվող միսը ևս հիմնականում չի վերամշակվում (չհաշված տնային պայմաններում գործող մի քանի փոքր արտադրամասերի, որոնք արտադրում են շատ քիչ քանակությամբ կիսաֆաբրիկատներ և հեշտ արտադրվող մսամթերք՝ հիմնականում բաստուրմա և սուջուխ):

⇒ Հողագործություն

Համայնքներում հիմնականում զարգացած է կարտոֆիլի և հացահատիկի աճեցումը, մասամբ՝ միամյա և բազմամյա անասնակերի աճեցումը: Գավառի տարածաշրջանում արտադրված կարտոֆիլը հայտնի է ՀՀ գրեթե բոլոր մարզերում «Քյավառի կարտոշկա»

բրենդի ներքո: Համայնքներում բերրի և ջրովի հողատարածքների առկայությունը նպաստավոր հնարավորություններ է ստեղծում հողագործության զարգացման համար և հողագործության զարգացումը, հիմնված տեղի մրցակցային առավելությունների վրա, կարող է արմատական կարևորություն ունենալ բնակչության զբաղվածության և կենսամակարդակի աճի համար:

⇒ **Կրթություն և ինֆորմացիոն տեխնոլոգիաներ**

Գավառ քաղաքում է գործում Գավառի պետական համալսարանը, որտեղ սովորում են ուսանողներ ՀՀ գրեթե բոլոր շրջաններից, ինչպես նաև գործում են գյուղատնտեսական և բուժ. քոլեջներ: Այս հաստատությունները վերապատրաստում են մրցունակ կադրեր՝ ֆինանսիստներ, հաշվապահներ, իրավաբաններ, բնագետներ և հումանիտար ուղղության այլ մասնագետներ: Ոլորտի աճը, ինչպես նաև այլ նեղ մասնագիտական կադրերի վերապատրաստումը թե՛ գյուղատնտեսական, թե՛ արդյունաբերության ոլորտներում էական ազդեցություն կարող է ունենալ տեղական տնտեսության զարգացման վրա:

Ուսումնասիրությունները և հանրապետական տարբեր մրցույթներում այս համայնքների երիտասարդների հաղթանակները, հիմնականում՝ մաթեմատիկայի և ճշգրիտ գիտությունների ոլորտում, ցույց են տալիս համայնքներում կուտակված մեծ պոտենցիալը ժամանակակից ինֆորմացիոն տեխնոլոգիաների՝ համակարգչային ծրագրերի, ավտոմատացված համակարգերի, այլ ճշգրիտ սարքավորումների արտադրության ոլորտում:

Անասնապահություն և հետագա վերամշակում

Անասնապահություն

Անասնապահությամբ զբաղվում են համայնքների տնային տնտեսությունների մոտ 20%-ը:

Ստորև ներկայացված է առկա անասնազլխաքանակը և բաշխվածությունը՝ ըստ համայնքների:

Աղյուսակ 1՝ Անասնազլխաքանակը համայնքներում.

| | Կարմիրգյուղ | Գանձակ | Գավառ |
|-------------------------------|-------------|--------|-------|
| Խոշոր եղջերավորներ | 1592 | 1957 | 7261 |
| որից՝ կով | 865 | 1024 | 3451 |
| որից՝ «կովկասյան գորշ» | 92 % | 76 % | 85 % |
| Մանր | 677 | 1002 | 3812 |

Համայնքներում առկա են 10 810 խոշոր եղջերավոր անասուններ, որից մոտ կեսը՝ 5 340-ը կովեր են: Անասունների հիմնական մասը «կովկասյան գորշ» տեսակի են: Վերջին տարիների ընթացքում, շնորհիվ աջակից կառույցների, մեծ տարածում է գտել արհեստական սերմնավորման միջոցով նոր տեսակի (Շվից, Հոլշտեյն և այլն) սորտերի ստացումը: Աշխատանքների և օժանդակման նման զարգացման դեպքում առաջիկա երեք տարիների ընթացքում նոր տեսակի անասունների (հիմնականում՝ խառնածինների¹) տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ կտրուկ կաճի՝ հասնելով մինչև 50 % -ի:

Անասնապահությամբ զբաղվում են մոտ 1638 տնային տնտեսություններ, որոնց բաշխվածությունը, ըստ համայնքների և պահվող անասնազլխաքանակի, ներկայացված է ստորև.

Աղյուսակ 2 Անասնապահությամբ զբաղվող տնային տնտեսությունները՝ ըստ համայնքների.

| | Կարմիրգյուղ | Գանձակ | Գավառ |
|---------------------------------|-------------|--------|-------|
| Տնային տնտեսություններ | 538 | 548 | 552 |
| որից՝ | | | |
| 25 և ավելի գլուխ ունեցող | 8 | 0 | 101 |
| 10 - 25 գլուխ ունեցող | 10 | 24 | 157 |
| մինչև 10 գլուխ ունեցող | 520 | 524 | 294 |

Գավառի տարածաշրջանում անասնապահությամբ զբաղվում են հիմնականում 30 տարեկանից բարձր տարիքի անձինք, ովքեր անասունների պահքը կազմակերպում են ավանդական 2 եղանակով՝ ֆերմերային տնտեսությունը մայիս/հունիս-հոկտեմբեր ամիսներին անասուններին

¹ Անհրաժեշտ է ամենաքիչը վերարտադրության 4 սերունդ՝ նոր տեսակի կովերի ստացման համար:

տեղափոխում է հեռագնա արոտավայր կամ արոտավայրային շրջանում անասուններին ուղարկում են նախիր՝ մոտակա արոտավայրեր:

Հեռագնա արոտավայրերում անասունները պահվում են բացօթյա, հիմնականում ինքնաշեն գոմային պայմաններում. տաք եղանակին պահում են դրսում, իսկ ցուրտ եղանակին՝ քարից և փայտից կառուցված գոմերում: Մարային պայմաններում պահքը բերում է կաթնատվության և մսատվության աճին, ինչպես նաև կաթի յուղայնության տոկոսի բարձրացմանը: Միևնույն ժամանակ, նման պայմաններում տնտեսության վարումն ունի մի շարք դժվարություններ՝ պայմանավորված ենթակառուցվածքների վատթար վիճակով և բնակլիմայական պայմաններով: Մսուրային շրջանում անասունները տեղափոխվում են գյուղ: Գավառի տարածաշրջանում անասունի մսուրային պահքի շրջանը կազմում է միջինը 7 ամիս, որի ընթացքում կերակրվում է 2,5տ խոտ: Պահքը կազմակերպվում է հետևյալ մոտեցմամբ՝

- Անասունները գոմում գտնվում են միայնցից 1-1,5մ հեռավորության վրա, մսուրի բարձրությունը կազմում է 50-80 սմ: Տեղի ջերմաստիճանը տատանվում է 20-25°C, սանիտարահիգիենիկ մաքրությունը ապահովված է մասամբ: Խոտի թափոնը օրական կազմում է 5-10%:
- Մսուրային պահքի ընթացքում անասունների կերակրացանկի մեջ մտնում է խոտհարքերից բերված 80% չոր կեր՝ խոտ, գարու և ցորենի թեփ, ծղոտ և 20% հյութալի կերեր՝ կարտոֆիլ, կաղամբ, շաքարի ճակընդեղ:




Կաթի և կաթնամթերքի արտադրություն

Կովի կաթնատվությունը տարածաշրջանի համար տարեկան միջինը կազմում է 2000 լիտր: Կաթի յուղայնությունը ամռանը տատանվում է 3,6-3,8%, իսկ ձմռանը՝ 4,2-4,5% սահմաններում: Տարածաշրջանում անասնապահությամբ զբաղվող տնային տնտեսությունները ստացված կաթի 65%-ը վաճառում են, 10%-ը՝ սպառում սեփական տնային տնտեսության ներսում և հորթերի կերակրման համար, 25%-ը՝ վերամշակում տնային պայմաններում: Վերամշակման հիմնական ձևը պանիրն է (80%)՝ չանախ տեսակի, ավանդական հորած պանիր և կարագ/յուղ (10%), այլ կաթնամթերք՝ (10%): Վերջիններիս պատրաստման եղանակները ևս ավանդական են և նոր տեխնոլոգիաներ այս ոլորտում հիմնականում չեն կիրառվում:

Բացակայում է հիմնականում համագործակցությունը ոլորտի տնտեսությունների միջև՝ մթերումների, մատակարարումների, վաճառքի, անասնաբուժության և այլ բնագավառներում:

Համայնքների ներսում կաթի վաճառքի գինը 1 լիտրի համար 200 դրամ է: Կաթի մթերման գինը սեզոնային է և տատանվում է 120 - 180 դրամի սահմաններում: Կաթ մթերում են ինչպես տեղի ներկայացուցիչները, ովքեր հանդիսանում են միջնորդ - վաճառողներ և մթերած կաթը հանձնում են մարզում և մարզից դուրս կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող ձեռնարկությունների, այնպես էլ այդ ձեռնարկությունների ներկայացուցիչները: Պանրի վաճառքի միջին գինը 1 կգ-ի համար 1500 - 1600 դրամ է:

Ստորև սխեմատիկ ներկայացված են արտադրվող կաթի իրացման ուղղությունները.



Ստորև ներկայացված է շահույթի հաշվարկը՝ 10 կով ունեցող ընտանիքի համար կաթի իրացման և կաթից պանրի ստացման դեպքերում:

Կաթի վաճառք

| | | |
|-----|--------------------------------------|---|
| 1 | Ստացվող կաթ, որից՝ հորթերի կերակրում | 2000 լիտր x 10 = 20 000 լիտր 1400 լիտր |
| 1.1 | Կաթի վաճառքից եկամուտ | (20000 - 1400) x 130 = 2 418 000 դրամ |
| 2 | Հորթ | 8 հատ |
| 2.1 | Հորթի վաճառք | 60 000 դրամ x 8 = 480 000 դրամ |
| 3 | Ընդամենը՝ եկամուտ (1 + 2) | = 2 818 000 դրամ |
| 4 | Ծախսեր | = 726 000 դրամ |
| 5 | Լրացուցիչ ծախսեր այլ կերերի համար | = 310 000 դրամ |
| 6 | Շահույթ | = 1 782 000 դրամ |

Կաթից պանրի ստացում և իրացում

| | | |
|------|--|---|
| 1 | Ստացվող կաթ, որից հորթերի կերակրում | 2000 լիտր x 10 = 20 000 լիտր 1400 լիտր |
| 1.01 | Պանրի ստացում | 2325 կգ |
| 1.1 | Պանրի վաճառքից եկամուտ | 2325 x 1500 = 3 487 000 դրամ |
| 2 | Հորթ | 8 հատ |
| 2.1 | Հորթի վաճառք | 60 000 դրամ x 8 = 480 000 դրամ |
| 3 | Ընդամենը եկամուտ (1 + 2) | = 3 964 500 դրամ |
| 4 | Ծախսեր | = 1 036 000 դրամ |
| 5 | Պանրի արտադրության լրացուցիչ ծախսեր ² | = 150 000 դրամ |
| 6 | Շահույթ | = 2 778 500 դրամ |

Ակնհայտ է , որ պանրի արտադրությունը ապահովում է շահութաբերության ավելի քան 50 % աճ, միննույն ժամանակ, ի տարբերություն կաթի հատկանիշների արագ որակագրկման, պանիրը հնարավոր է պահպանել շատ ավելի երկար ժամանակահատվածում:

Նաև պետք է նշել, որ հաշվարկը կատարված է տնական պայմաններում ոչ ստանդարտ պանրի արտադրության և վաճառքի նվազագույն գնի դեպքում: Արտադրական և ստանդարտացման դեպքում հնարավոր է արտադրված պանիրը վաճառել կգ-ը 2200 - 3000 դրամով:

² Ծախսերը հաշվարկված են տնային պայմաններում պանրի արտադրության համար:

Հիմնականում արտադրվում է Չանախ տեսակի պանիր՝ ավանդական եղանակով և տնային պայմաններում : Ունենալով համային բարձր հատկանիշներ՝ տարբեր արտադրողների կողմից արտադրված պանիրը ունի արտաքին տեսքի, քաշի և համային ակնհայտ տարբերություններ:

Տնային պայմաններում պանրի արտադրությունը խրախուսվում է, միննույն ժամանակ այս ոլորտի հետագա զարգացման համար անհրաժեշտ է տեղական փոքր արտադրամասերի հիմնում, որտեղ կարտադրվեն միանման և միևնույն որակի ստանդարտներ ունեցող պանիր, որը շուկայում հանդես կգա միևնույն բրենդի ներքո, կունենա մրցունակ փաթեթավորում:

Մսի և մսամթերքի արտադրություն

Որակյալ մսի արտադրությունը և վաճառքը (հատկապես խոշոր եղջերավոր անասունների մսի արտադրությունը) Գավառի տարածաշրջանում բավականին զարգացած, մրցունակ և առաջատար ոլորտ է: Ոլորտի զարգացմանն են նպաստել ինչպես որակյալ մսի արտադրության համար նպաստավոր բնակլիմայական և տարածքային առանձնահատկությունները, այնպես էլ տեղի բնակչության կողմից ավանդապես ձևավորված որակյալ մսի պահանջարկն ու տարածաշրջանին հատուկ ուտեստները, որոնց մեջ իր անփոխարինելի տեղն ունի «Քյավառի քյուֆթան» :

Գավառը ու հարակից համայնքները ոչ միայն հանդիսանում են որակյալ մսի խոշոր սպառողներ, այլև այստեղ բավականին շատ են մատակարարները և մսի վերավաճառողները, ովքեր միսն արտահանում են դեպի Երևան , քիչ քանակությամբ՝ նաև այլ մարզեր:

Տարեկան Գավառում, Գանձակում և Կարմիրգյուղում արտադրվում է մոտ 620 տոննա միս:



Մսի ստացման համար տնտեսությունների 70%-ից ավելին արու հորթերին բուման նպատակով ուղարկում են սարային պայմաններում պահքի՝ մայիսից հոկտեմբեր ամիսներին: Պահքի գումարը 5-6 ամիսների համար կազմում է 20.000-25.000 դրամ: Մյուս տնտեսությունները հորթերին պահում են գոմային պայմաններում նաև տաք շրջանում կամ՝ վարձում նախրապահ: Ի տարբերություն առաջին մոտեցման՝ նման տարբերակով բտումն առավել թանկ արժե տնտեսության համար, և ստացվող մսի որակը զիջում է նախորդին:

Ընդհանուր առմամբ միսը վաճառվում է մսավաճառների և վերավաճառող միջնորդների միջոցով, միևնույն ժամանակ քիչ չեն նաև դեպքերը, երբ ֆերմերը ինքն է մորթում անասունը և վաճառում հենց տնից՝ հարևանների, բարեկամների և ծանոթների միջոցով:




Ստորև ներկայացված են մսավաճառների կողմից մսի գնման և վաճառքի միջին գները այս պահին .

| Տավար | գնման գին 1կգ/ դրամ | վաճառքի գին 1կգ / դրամ |
|--------------------------|---------------------|------------------------|
| Ցուլ | 1900 – 2000 | 2300 |
| Կով | 1400 – 1500 | 1600 - 1800 |
| Ոչ առողջ և տարեց կենդանի | 1000 – 1200 | 1300 - 1500 |

| Խոզ | գնման գին 1կգ/ դրամ | վաճառքի գին 1կգ / դրամ |
|-----------------------|----------------------|------------------------|
| Գոճի՝ 40 օրական | 30000 – 35000 (հատր) | 3000 |
| Խոզ՝ 20 – 40 կգ-անոց | 2300 - 2500 | 2800 - 3000 |
| Խոզ՝ 60 – 100 կգ անոց | 1800 - 2000 | 2500 – 2800 |
| Սալ | 1000 | |

Համայնքների ներսում վաճառվում է ցուլի և կովի որակյալ միս, իսկ միջին և ցածր որակի միսը հիմնականում արտահանվում է դեպի այլ շրջաններ: Ստորև սխեմայի միջոցով ներկայացված է մսի վաճառքի ցիկլը համայնքներում:



Գավառ քաղաքում և հարակից համայնքներում միսը վաճառում են 28 մսավաճառներ, որոնցից 6 -ը միսը վաճառում են Գավառի շուկայի շենքում, 3-ը՝ շենքի հարակից տարածքում և 19-ը՝ տարբեր թաղամասերում և երկու գյուղերում: Այս մարդկանց միջոցով վաճառվում է մոտ 883 տոննա թարմ միս: Այլ մարզեր (հիմնականում Երևան) արտահանվում է 480 տոննա միս:

Մսավաճառների հիմնական մասը վաճառում են նաև կիսաֆաբրիկատներ, որոնք պատրաստում են տեղում՝ գնորդի ներկայությամբ: Տարեկան վաճառվում է 117 տոննա կիսաֆաբրիկատ, որի գերակշիռ մասը՝ 95 %-ը, «Քյուֆթայի» համար անհրաժեշտ «ձեծած միսն» է: Գնված մսամթերքի մի մասը գնորդների միջոցով ուղարկվում է շրջանից դուրս՝ այլ մարզերում գտնվող իրենց հարազատներին:

Ըստ ուսումնասիրությունների՝ տարեկան այս եղանակով արտահանվում է 20 - 25 տոննա կիսաֆաբրիկատ: Հատկանշական է, որ նման ոչ փոքր ծավալի դեպքում շրջանում չեն գործում ձեռնարկություններ, որոնք զբաղվեն կիսաֆաբրիկատների արտահանմամբ:

Մսի արտահանումը իրականացնում են մսավաճառները և վերավաճառողները, ովքեր հավաքում են 1-2 տոննա միս և արտահանում հիմնականում Երևան՝ սուպերմարկետներ և Գումի շուկա:

Ոչ որակյալ միսը (հիմնականում հիվանդ և ծեր անասուններ) ուղարկվում է Գումի շուկա 700 - 900 դրամով, կամ Երևանի կենդանաբանական այգի՝ 200 -300 դրամով:

Համայնքներում վերամշակվում է վաճառվող մսի 1 % -ը միայն: Հիմնականում արտադրվում է տնական պայմաններում հեշտ արտադրվող և մեծ պահանջարկ ունեցող «Բաստուրմա», «Սուջուխ», ինչը վաճառում են իրենց հիմնական հաճախորդներին՝ 5000 - 7000 դրամով:

Շրջանում մսի վերամշակման արտադրամասեր չեն գործում: Ըստ տեղի գործարարների՝ այս հանգամանքը բացատրվում է որակյալ մսից արտադրվող մսամթերքի բարձր ինքնարժեքով, ինչի դեպքում բավականին դժվարանում է արտադրանքի վաճառքը և շահույթի ստացումը:

Ստորև ներկայացված է 10 բովոդ հորթի դեպքում ստացվող շահույթի հաշվարկը.

| | |
|-------------------------------|------------------------------------|
| Ստացվող միս | 220 կգ x 10 = 2 200 կգ |
| Մսի վաճառքից եկամուտ | 2 200 x 2000 դրամ = 4 400 000 դրամ |
| Եկամուտ ենթամթերքներից | 100 000 դրամ |
| Ծախսեր | 1 700 000 դրամ |
| Շահույթ | = 2 800 000 դրամ |

Նախաձեռնություններ անասնապահության և անասնամթերքի վերամշակման ոլորտներում

Անասնապահության և մսի ու կաթի վերամշակման զարգացումը այս համայնքների համար ունեն արմատական կարևորություն: Ստորև փորձագետների և տեղական թիմի կողմից վեր են հանվել զարգացման ուղղված նախաձեռնություններ, որոնք կօժանդակեն ոլորտի արագ և արդյունավետ զարգացմանը:

Անասունների բուծում, կաթի և մսի արտադրություն

| | |
|--|--|
| <p>Խտացված կերի արտադրամասի հիմնում</p> | <p><i>Զարգացած չէ խտացված կերի արտադրությունը, ինչը ուղղակիորեն անդրադառնում է թե՛ կաթնատվության, թե՛ արտադրվող մսի քանակի վրա:</i></p> |
| <p>Արհեստական սերմնավորման և նորագույն տեխնոլոգիաների օգտակարության վերաբերյալ դասընթացներ</p> | <p><i>Ֆերմերները ունեն տեղեկության պակաս՝ նորագույն տեխնոլոգիական լուծումների հետ կապված, որոնք հնարավոր է կիրառել անասնապահության մեջ: Միևնույն ժամանակ ունեն վստահության պակաս արհեստական սերմնավորման վերաբերյալ:</i></p> |
| <p>Ցածր տոկոսադրույքով վարկերի տրամադրման հնարավորությունների ստեղծում՝ խոշոր եղջերավոր անասնապահությանը զբաղվող տնտեսությունների համար</p> | <p><i>Հասանելի ֆինանսական միջոցները մատչելի չեն և հիմնականում բարձր տոկոսադրույքի և կարճաժամկետության արդյունքում ֆերմերները խուսափում են նման միջոցներով ներդրումներ կատարել անասնապահության ոլորտում:</i></p> |

Կաթնամթերքի և մսամթերքի արտադրություն

| | |
|---|--|
| <p>Կաթնամթերքի և մսամթերքի վերամշակման տեխնոլոգիական և ուսումնական ռեսուրս կենտրոնների հիմնում</p> | <p><i>Ունենալով մսի և կաթի զարգացած արդյունաբերություն՝ համայնքներում չի զարգացել վերամշակումը հիմնականում այն պատճառով, որ տեղի գործարարները ունեն արտադրության գործընթացի վերաբերյալ տեղեկատվության պակաս: Նրանց կարծիքով՝ կաթնամթերքի արտադրությունը մոնոպոլիզացված է, իսկ որակյալ մսից մսամթերքի արտադրությունը մրցունակ չէ շուկայում:</i></p> |
| <p>Կաթնամթերքի և մսամթերքի վերամշակման փոքր արտադրամասերի ստեղծման աջակցություն, ընդհանուր բրենդի ստեղծում</p> | <p><i>Ֆինանսական, տեխնոլոգիական և ձեռնարկատիրական գործունեության վերաբերյալ դասընթացների և աջակցության առկայությունը, ինչպես նաև արդյունավետ օրինակների առկայությունը ձեռնարկատերերին կնդի այս ոլորտի արտադրամասերի ստեղծմանը և գործարկմանը:</i></p> |

Հողագործություն

Երեք համայնքները միասին ունեն մոտ 7343 հեկտար վարելահող, որից մշակում են 4180 հեկտարը: Ստորև ներկայացված են մշակվող հիմնական մշակաբույսերը՝ ըստ ցանքատարածքների.

| | Կարմիրգյուղ | Գանձակ | Գավառ |
|-----------------------------|-------------|------------|-------------|
| Վարելահողեր | 1325 | 919 | 5099 |
| մշակվող | 1065 | 917 | 2198 |
| որից՝ | | | |
| Ցորեն | 505 | 313 | 30 |
| Գարի | 360 | 285 | 1606 |
| Կարտոֆիլ | 180 | 172 | 480 |
| Այլ (հիմնականում անասնակեր) | 20 | 147 | 82 |

Ինչպես երևում է աղյուսակից, Կարմիրգյուղ և Գանձակ համայնքներում վարելահողերը գրեթե ամբողջությամբ մշակվում են, Գավառ քաղաքում մշակվում է վարելահողերի մոտ 40 %-ը միայն:

Հիմնական աճեցվող մշակաբույսերն են՝ հացահատիկը, կարտոֆիլը և խոտաբույսերը:

Ստորև ներկայացված է 1 հեկտարի համար ցորենի, գարու և կարտոֆիլի շահութաբերության հաշվարկը.

| | | Կարտոֆիլ | Ցորեն | Գարի |
|---|---|------------------|----------------|----------------|
| 1 | 1 հա-ից ստացվող վաճառքի միջին բերքը, կգ | 20000 | 2200 | 1900 |
| 2 | 1 կգ-ի միջին մեծածախ գինը (2013թ) | 120 | 150 | 130 |
| 3 | 1 հա-ից ստացված եկամուտը | 2400000 | 330000 | 247000 |
| 4 | 1 հա-ի վրա կատարված ծախսերը | 980000 | 170000 | 145000 |
| 6 | Շահույթ | 1 420 000 | 160 000 | 102 000 |

Հացահատիկի մշակում

Ցորենի և գարու աճեցումը հողագործության ավանդական ճյուղերից է: Աշնանացան ցորենի 1 հա. միջին բերքատվությունը կազմում է 2 - 2.5 տոննա., իսկ գարու բերքատվությունը՝ 1.8 - 2 տոննա: Այս ոլորտում ցածր է շահութաբերությունը: Ցածր շահութաբերության հետևանքով գնալով նվազել են ցորենի և գարու ցանքատարածքները: Ցածր շահութաբերությունը պայմանավորված է հետևյալ գործոններով: Չնայած ցածր շահութաբերության, այս մշակաբույսերի մշակումը բավականին հեշտ է, պահանջում է համեմատաբար փոքր ներդրում:

Որակյալ և տեղական պայմաններին ադապտացված սերմացուի անհասանելիություն.

Գարնանացան ցորենը չի հասցնում հասունանալ, ինչի հետևանքով հիմնականում օգտագործվում է աշնանացան ցորենը: Համայնքներում հասանելի չեն աշնանացան ցորենի որակյալ սերմեր:

Օգտագործվող գյուղտեխնիկայի ֆիզիկական մաշվածություն.

Ցորենի բերքահավաքը կատարվում է 1970-80-ական արտադրության կոմբայներով, ինչը կրկնակի աճեցնում է դիզվառելիքի ծախսը: Բերքահավաքի կորուստը կազմում է 30 - 35 %:

Կոմբայների համեմատաբար մեծ չափերը նախատեսված չեն փոքր տարածությունների մշակման համար, ինչը բերում է արտադրողականության անկման, ժամանակի կորստի և դիզվառելիքի ծախսի ավելացմանը:

Հողագործները կատակում են, որ այն հողատարածքներում, որտեղ ցանվել է ցորեն, հնարավոր չէ հաջորդ տարվա ընթացքում գարի ցանել և հակառակը, քանի որ չհավաքված բերքը հաջորդ տարի սկսում է աճել և ստացվում է ցորենի և գարու խառը բերք:

Ցորենի վաճառքն ուղղված է հիմնականում համայնքի ներսում պահանջարկի բավարարմանը: Տարածաշրջանում ստացված բերքի մոտ 70% վերածվում է ալյուրի. սպառվում է բերքի արտադրությամբ զբաղվող տնային տնտեսության ներսում կամ վաճառվում ալրադացներին, 10% պահվում է որպես սերմ, իսկ մոտ 20%-ը օգտագործվում են կամ վաճառվում որպես անասնակեր:

Կարտոֆիլի մշակում

Համայնքներում աճեցնում են 832 հեկտար կարտոֆիլ: Կարտոֆիլագործությունը մրցունակ ճյուղ է և Գավառի կարտոֆիլը հայտնի է ՀՀ գրեթե բոլոր շրջաններում:

Կարտոֆիլագործության համար կա համապատասխան սպառման շուկա և վաճառքի հետ կապված խնդիրներ չեն առաջանում: Կարտոֆիլի վաճառքն ուղղված է հիմնականում արտաքին պահանջարկի բավարարմանը: Արտադրվող կարտոֆիլի 10%-ն օգտագործվում է անձնական սպառման համար, 20%-ը սպառվում է համայնքների ներսում՝ տարբեր իրերի և մթերքների փոխանակման միջոցով և 70%-ը վաճառվում է հիմնականում Երևանում՝ արտադրողների և վերավաճառողների միջոցով:

Սպառման տեսանկյունից հիմնականում վաճառվում է որակյալ բերքը՝ մեծ և առողջ կարտոֆիլ, իսկ բերքի մնացած մասը կամ վաճառվում է ցածր գնով, կամ՝ սպառվում տնային պայմաններում:

Ստորև ներկայացված են այս ոլորտների ուժեղ և թույլ կողմերը.

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|--|
| Ժամանակին ոռոգելու հնարավորություն | Շուկայում գները թելադրում են խոշոր տնտեսությունները, և փոքրերը տուժում են: |
| Երկար տարիների ընթացքում կարտոֆիլի մշակումը բերել է այս ոլորտում դրական փորձի կուտակմանը: | Հողը էրոզիայի է ենթարկվել տարիների ընթացքում, և ընկել է բերքատվությունը: |
| | Մատակարարները որակյալ սերմացուն շատ բարձր գնով են առաջարկում, ձեռքբերման այլ աղբյուրներն էլ անհասանելի են: |
| | Թունաքիմիկատների հարցում ընտրությունը մեծ չէ, և հիմնականում դրանք անորակ են լինում: |
| | Պարարտացումը կատարվում է միատարր (օգտագործվում է միատեսակ պարարտանյութ՝ առանց հողի հետազոտության): |
| | Կարկտի և երաշտի վտանգ: |

Բազմամյա մշակաբույսեր

Բազմամյա խոտաբույսերի մշակումը ևս համայնքում բավականին տարածված է: Ցանովի խոտաբույսերի բարձր բերքատվության շնորհիվ հնարավորություն է ստեղծվում միավոր տարածության հաշվով ավելի շատ անասնախոտ ստանալ: Միննույն ժամանակ վարելահողերում ցանվող մշակաբույսերի տեսակների փոփոխությունը չի որակագրկում հողը, ինչն ապահովում է համեմատաբար բարձր բերքատվություն:

Առվույտի և կորնգանի ցանքը հիմնականում կատարվում է գարնանացան գարու հետ: Առաջին տարում ստացվող բերքը փոխհատուցում է կատարված ծախսերը և սկսած երկրորդ տարվանից՝ խոտադաշտերը կատարված ծախսերի ցուցանիշներով գրեթե հավասարվում են բնական խոտհարքի վրա կատարված ծախսերին՝ միննույն ժամանակ ապահովելով 3-4 անգամ բարձր բերքատվություն և կերամիավորների քանակ:

Խոտի հավաքման ծախսերի համեմատական ցուցանիշներ (չի ներառում տեղափոխումը)

| Տեսակը | Բերքատվությունը ց/հա | Հավաքման ծախսերը հա/դրամ | Այդ թվում | | | | 1 կգ խոտի հաշվով կատարվող ծախսը | 1 հակի (20կգ) հաշվով կատարվող ծախսը |
|---------|----------------------|--------------------------|-----------|-------|------------|-------|---------------------------------|-------------------------------------|
| | | | Խոտհունձ | Փոցիս | Հակավորում | Այլ | | |
| Առվույտ | 75 | 105000 | 15000 | 10000 | 60000 | 20000 | 14 | 280 |
| Կորնգան | 65 | 97000 | 15000 | 10000 | 52000 | 20000 | 15 | 300 |
| Վարսակ | 40 | 77000 | 15000 | 10000 | 32000 | 20000 | 19 | 380 |
| Խոտհարք | 18 | 47900 | 10000 | 10000 | 13500 | 14400 | 27 | 540 |

Բերքատվության վրա ուղղակի ազդեցություն ունի գյուղ. ծառայությունների որակը: Համայնքներում առկա է բավարար քանակությամբ գյուղ. տեխնիկա, ինչը բավականին հնամաշ է:

Այլ մրցունակ մշակաբույսերի աճեցում

Համայնքներում , հիմնականում տնամերձերում, փոքր ծավալներով աճեցվում են նաև ազնվամորի, բանջարեղեն և ծաղիկների դեկորացիոն տեսակներ: Եթե բանջարեղենի աճեցումը հիմնականում ուղղված է տնտեսության պահանջների բավարարման համար և շուկայում մրցունակ չէ, քանի որ Արարատյան դաշտից և այլ բանջարեղենի արտադրության մեջ մասնագիտացված համայնքներից ներկրվող բանջարեղենը գնային առումով ավելի մրցունակ է, ապա ազնվամորու արտադրությունը կարող է հողագործության զարգացման հեռանկարային ճյուղերից մեկը դառնալ:

Ազնվամորի բերքատվությունը կախված է արևային օրերից և ոռոգման հնարավորություններից: Համայնքներում հասանել են ոռոգվող հողակտորները, իսկ արևային օրերի տևողությունը այս համայնքերի մրցակցային առավելությունն է:

Ազնվամորին բավականին պահանջված է շուկայում, և գնալով պահանջակը դինամիկ աճում է: 1 կգ-ի վաճառքի գները տատանվում են 500 - 800 դրամի սահմաններում: Այն պահանջված է ինչպես գյուղ. շուկաներում, այնպես էլ վերամշակող կազմակերպությունների կողմից:

1 հեկտարից ստացվում է 7 -10 տոննա բերք: 1 կգ բերքի ստացման և տեղափոխման արժեքը մոտ 300 դրամ է կազմում: Միջին հաշվարկներով 1 հեկտարից հնարավոր է ստանալ 4 - 4.5 մլն. դրամ շահույթ:

Նախաձեռնություններ հողագործության ոլորտում

- Գյուղտեխնիկայի թարմացման աջակցություն,
- անջրդի հողերում բարձր բերքատվություն ունեցող մշակաբույսերի սերմերի ներկրման աջակցություն,
- հացահատիկի որակյալ սերմերի ներկրման աջակցություն,
- ազնվամորու և արևասեր այլ մշակաբույսերի սերմերի ներկրման և փորձնական աճեցման աջակցություն:
- Գանձակ գյուղում մոտ 1 կմ երկարություն ունեցող ջրահեռացման համակարգի մաքրում, որը թույլ կտա ճահճացումից ազատել մոտ 60 հեկտար հողատարածք:
- Կարմիրգյուղ գյուղում մոտ 600 մետր ոռոգման ջրագծի կառուցում, որը կարող է ոռոգելի ջրով ապահովել 25 -30 հա հողատարածք:

Կրթություն և ինֆորմացիոն տեխնոլոգիաներ

Գավառի պետական համալսարանը, գյուղատնտեսական և բուժ. քոլեջներն ունեն մոտ 3000 ուսանող և պրոֆեսորադասախոսական ճանաչված մասնագետներ: Այս կազմակերպությունները ապահովում են որակյալ մասնագետներ տնտեսագիտության, ինֆորմացիոն տեխնոլոգիաների, գյուղատնտեսության, բնագիտության , գյուղատնտեսության և բուժ. սպասարկման ոլորտներում:

Ստորև ներկայացված են կրթական հաստատությունների ուժեղ կողմերը և բարելավման հնարավորությունները.

| Ուժեղ կողմեր | Բարելավման հնարավորություններ |
|--|---|
| Շենքային բարվոք պայմաններ և ժամանակակից լաբորատորիաների/ սարքավորումների առկայություն, | Հնարավորությունները ամբողջությամբ չեն օգտագործվում: |
| Բարձրակարգ դասախոսներ և ուսանողներ, | Հիմնականում չկան նեղ մասնագիտական, արհեստագործական դասընթացներ: Չեն վերապատրաստվում այս պահին մեծ պահանջարկ ունեցող այնպիսի մասնագետներ, ինչպիսիք են եռակցողները, մսամթերքի և կաթնամթերքի արտադրության մասնագետները, տեխնոլոգները և այլն: |
| Որակյալ մասնագետների վերապատրաստում: | |

Որպես կրթական ոլորտի նախաձեռնություն՝ ԳԱԱՊ-ը կիրականացնի քայլեր կրթական կառույցների և գործարարների միջև երկխոսության և համագործակցության կայացման հարցում, որպեսզի համատեղ հնարավոր լինի վեր հանել պահանջված մասնագիտությունների ցանկը և տանել աշխատանքներ՝ հետագայում այդ ոլորտներում մասնագետների վերապատրաստման ուղղությամբ:

Կարևոր է նաև ձեռնարկել քայլեր ինֆորմացիոն տեխնոլոգիաների դաշտում փոքր խմբերի ձևավորման ուղղությամբ, որոնք համայնքների երիտասարդությանը կարող են ապահովել բարձր եկամտաբեր աշխատանքով:

Առևտուր

Առևտուրը տարածքի ավանդական ճյուղերից է, ինչի մասին է վկայում զարգացած մսի առք ու վաճառքը ինչպես համայնքների ներսում, այնպես էլ ՀՀ շրջանների միջև, հագուստի ներմուծումը Չինաստանից, Թուրքիայից և Եվրոպական երկրներից:

Այս պահին առևտրի ոլորտը հագեցած է և անկում է ապրում՝ բնակչության կենսամակարդակի նվազման և արտագաղթի հետ կապված:

Համայնքներում գործում են սնունդ վաճառող 67 խանութներ, 72 հագուստի վաճառման խանութներ/կետեր, 8 շինանյութի խանութներ, 5 տնտեսական ապրանքներ վաճառող խանութներ:

Մսնդի վաճառքը վերջին 5 ամիսների ընթացքում նվազել է գրեթե 25 % -ով՝ անցած տարվա նույն ամիսների վաճառքի հետ կապված: Հագուստի վաճառքը նվազել է 30 % -ով, փոքրացել է նաև հագուստի առևտրով զբաղվող մարդկանց քանակը՝ 152 մարդուց հասնելով 97 -ի:

Կանանց ներգրավվածությունը արժեշտթաներում

Գյուղատնտեսության մեջ կանայք ինտենսիվ ներգրավված են հիմնականում տնամերձ հողակտորների մշակման և սեփական անասունների խնամքի ու կթի գործընացներում: Այս ոլորտում ներգրավված են 3000 և ավելի կանայք: Անասունների հեռագնա արոտ տեղափոխելիս, ինչպես նաև վարելահողերի մշակման մեջ կանայք քիչ են ներգրավված՝ մոտ 60 - 70 կին:

Առևտրի մեջ ներգրավված են 100 - 120 կանայք, տնտեսության այլ ոլորտներում (սպասարկում, բանկեր և այլն)՝ մոտ 50 կանայք և աղջիկներ:

Կրթության ոլորտում ներգրավված են 340 կանայք:

Շնորհակալություն ենք հայտնում Գավառ քաղաքի քաղաքապետարանին և Գանձակ,
Կարմիգյուղ համայնքների գյուղապետարաններին ծրագրի իրականացմանն
աջակցելու համար:

